



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 թվականի N 8-Ա

ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԱՏՈՄ ՀԱԿՈՔՅԱՆ» ԱԶ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշումով, հիմք ընդունելով «Ատոմ Հակոբյան» ԱԶ-ի ներկայացրած 2019 թվականի հունվարի 8-ի N 08 հայտը՝

Որոշում եմ՝

1. Երանոս համայնքի վարչական տարածքում՝ Վարդաձորի խճուղի, 1/2 հասցեում թույլատրել «Ատոմ Հակոբյան» ԱԶ-ին իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի մանրածախ վաճառք:
2. Հանձնարարել «Ատոմ Հակոբյան» ԱԶ-ին պահպանել առևտրի համայնքային կանոնները, օրենքով սահմանված տեղական տուրքերը վճարել համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերով և ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 8-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՇԱ ԲԱՎԵՅԱՆ